

ՄԱՐԱԲԱ ՄԾՈՒՐՆԱՅԻ

ԿԱՐ

Կ Ե Ղ Ծ - Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ Ո Ս

(Շար. տես էջ 577, 1898)

4) Բաց ի յիշեալ երեք զլիւսուր աղ-
բիւրհերից Անանունն ունէր նաև ուրիշ օ-
մանդակ աղբիւրներ, ինչպէս են.

ա) Ագարանգեղոս (Սկզբնական խմբա-
գրութիւնը, Ե Գ. սկզբում). նորա «Դարձի
պատմութիւնից» Անանունին յայտնի է Տրդատ

ԱՆԱՆ. էջ 2.

... ուստի եղև ոկրգբն ամենայն երկրի շե-
նուածոց լրմանց. և անտի ի տոյն պատուառ-
տելոյ յաւգել զգրուցակարգութեան վէպս հըս-
կայազանցն և զառաւպելս ունայնա՝ անհան-
ճար զաւրացն, զոր ի մեծ երկանցն աշտարա-
կին յդոարիան ծնանելով՝ ցորի ընդ մեծ անա-
պատ անթիւ, որ ի կայս անշտարս ճայնից ան-
պաշար ի վերայ անն ընկերի առնելը սուրն
Տիտան. յորում առաջին թաղաւորեաց ի վե-
րայ երկրի:

Վերջապէս Ագաթանդեղոսի յառաջարա-
նից կախումն ունի և Անանուն Հատուածի
մէջ բերած արձանագրութեան հեղինակի...
ազգը կամ նախաբանը՝ հեղինակի, որ
իրեն նոյնպէս Ագաթանդեղոս է անուա-

ԱՆԱՆ. էջ 1.

... Քանզի զսինն տաճարին այնորիկ խըն-
դրեալ ի դուռն արքային Պարսից, և բացեալ
զաւերածն վասն սեանցն ըստ զիպան արձա-
նադրին դրչմեալ ի վերայ վիմի զամս և զա-
ւուրս հինգ թաղաւորացն Հայոց և Պարթևաց
յռանաքին յայրոսթեանք. զոր իմ գտեալ է Միշա-
գետս՝ ի նորին աշակերտացն կամեցայ ձեզ
զրուցակարգել. քանզի այսու ունէր վերնա-
գիրն այսպէս.

Թագաւորը, որ՝ անկասկած Մեծն Տրդատն է՝
կոստանդիանոս Մեծի ժամանակակիցը և
Գրիգոր Լուսաւորչի եռանդուն օգնականը
քրիստոնէութիւնը Հայաստանում տարածե-
լու՝ Դ. դարու սկզբում։ — Ագաթանդեղի ա-
ռաջին մասիցն է (նահատակութիւն Ս. Գրի-
գորի և Ս. Հովսէփի մեանց) վերցրել մեր հե-
ղինակը, ինչպէս սրղէն ասացի, նաև «Փա-
ռական դաշտ քրտոց» (էջ 7). հմմտ. Ագա-
թանդեղի՝ որս առնել երթեալ ի դաշտն
Փառական...» (էջ 167)։

Աւելի ևս կարեւոր է նոյն պատմաբանի
երկրորդ մասից արած քաղաւածքը (վարդա-
պետութիւն Ս. Գրիգորի)՝ աշտարակաշինու-
թեան վերաբերեալ հատուածից, որ Անա-
նունը կերպարանափոխել է համաձայն իր
նպատակին, ինչպէս երևում է հետեւեալ
բաղդաատութիւնից.

Ա Գ Ա Թ Ա Ն Գ Ե Ղ. 463-8.

Եւ հայեցեալ ի պատուհասն յառաջին եկեալ
ջրհեղեղին սկսան գործել զաշտարակն... Իսկ
յդոարիան նոցա (գործել զաշտարակն) ծնողց
զանշտար միմեանց ճայնիցն չփոթութիւն...
յղացան զանորէնութիւն, ծնան զբաւմանայն
լեզուաբաժանութիւն, զի մի լուիցէ այր ըն-
կերի բարբառոյ, ի միմեանց մեկնելով զքոռեցան:

նում և հաւասար կերպով ստանձնում է տա-
րեցրութիւն կազմիւղւ բաջն Տրդատի հրա-
մանով, Համեմատութիւն համար գնում եմ
այստեղ երկու հատուածն էլ.

Ա Գ Ա Թ. էջ 18-20.

... Արդ հրաման հասեալ առ իս ոմն Ագա-
թանդեղոս որ ի քաղաքէ ի մեծն Հոսմայ և
վարժեալ հայրենի արուեստիւ հռոմաբէն և
յռանաքին ուսեալ զպրոքսիան, և ոչինչ կարի
անտեղեղալ լեալ ձեռնարկութեան նշանադրաց-
ն ի վերայ այսոցիկ հասեալ ի դուռն Արչա-
կունւոյ, զամս քաջի առաքինւոյ ուսեղ և պա-
տերազմող Տրդատայ որ... ոչ զիւր քաջու-
թիւնն ողուս ինչ հրամայեաց մեզ վիպասանել:

Ա Ն Ա Ն . էջ 1 .

Ա Յ Ա Յ . էջ 18-20 .

Եւ Ագարանգեղոս զրէշ զրեցի ի վերայ ար-
ձանիս այսորիկ իմով ձեռամբս զամս առաջին
թագաւորացն Հայոց, հրամանաւ քաջիւն
Տրդատայ՝ առեալ ի զիւսանէ արքունի, զոր
փաթը մի է ապա յիւրում տեղւոյն տեսցես
զպատուէնն: Բայց ես նախ առաջին զվիպս յա-
հեղն արքայ և յարի այրն սկսայց տեսն նախ
զնախնեացն պատմութիւնսս . . .

բ) Փաստոս Բիւզանդ (նախնական խմբա-
գրութիւնը Ե. դարու սկզբում): Սորանից
գիտէր Անանունը Սանատրուկ արքայ Հայոց
և Մեծ Հայքում նորա շինած Մեծոքի
քաղաքի մասին (Հմմտ. Փաստ. Հրատ.

և սչ զքմազարդ բանից ինչ առաջելու ա-
ւելի քան զարժանն ընթանալ . . . Արշ հասեալ
առ իս հրամանի ի մեծ արքայէն Տրդատայ,
կարգել ինձ ի ձեռնարկութենէ Նշանագիւտ
ժամանակազրացն պատմել նախ զհայրեւ-
նեացն զործն քաջութեան քաջին թոքորովս . . .

1832, էջ 5, 115 և 142 և Անան. էջ 1),
նոյնպէս «Արաբկաց» առասպելի մասին,
որ աւելորդ չէ բաղդաստել Անանունի առաջ
բերած զրոյցի հետ.

Ա Ն Ա Ն . էջ 8-6 .

ՓԱՍՏԱՍ . Զ. 36, էջ 238 .

Գայ հասանէ ի դաշտն Արայի, և տայ պա-
տերազմ ընդ Արայի, հարկանէ զզաւրն, և սպա-
նանէ զԱրայ ի պատերազմին: Եւ հրամայէ
Շամիրամ տանել զըն նորա ի վերնատունն ա-
պարանից իւրոց, և տես. Եւ ասացից առտաւա-
ծաց լիզոյզ զվիթս նորա և կենդանացի: Իսկ
Իբրէն նկիւնցաւ ի նորա ի վերնատանն, հրա-
մայեաց զաղտնի ընկնումը ի վիհ և ծածկել:
Եւ զարդարէ զմի զամբ ի հոմանեաց իւրոց այլ
պատշաճող, և համբաւ հանէ զԱրայի լիզոյզ
սատուածոցն և յարոցանել: Ունի ի ծածուկ
և ոչ ումեք ի ծանալթից նորա ցուցանէ զնա-
և այսպէս հանէ համբաւ Արայնգաց տիկինն
Շամիրամ:

Եւ ենթադրում եմ, որ Բագարատի «Փա-
սագեան» (Անան. էջ 6) կոչումն ևս, եթէ
միայն զա Վարազեան՝ չէ, կրում է Փաստ-
ոսի ազգացութիւնը (Ե, 15):

Կարելի էր՝ բացի զորանից, մասնանիշ-
անիլ Բէլի սպանման նկարագրութեան նմա-

Եւ եղև իբրև տարան զմարմինն սպարապե-
տին Մուշեղի ի տոնն իւր առ ընտանիս իւր,
ոչ հաւատային ընդանիք նորա մահուն նորա . . .
Զի ասեին. Գորա յանթիւ ճակատ մտեալ էր,
և վեր երէքք չէր առեալ. ոչ նետ մի զիպեցաւ
երէքք և ոչ այլոց զինու խոցեալ է զլուս իսկ
կէսք յառնելոյ ակն ունէին նմա . մինչև
զզուսին կոճեղն կարեալ կցեցին, և հանին ե-
ղին ի տանին աշտարակի միոյ, ասեին. Թէ
վասն զի այր քաշ էր, ասեցք իջանեն և յա-
րոցանեն զլուս Պահպան կացին և ակն ու-
նէին յառնելոյ, մինչև նկիւնցաւ մարմինն: Ա-
պա իջուցին յաշտարակէ անտի, և լացին թա-
ղեցին զնա որպէս օրէն էր:

նութիւնը Անանուն հատուածում (էջ 4, տող
17-23) Փաստոսի պատմած զէպքի հետ
(Ե, 43), որ նոյնպէս յիշեցնում է Բիւրիա-
կան մի նկարագրիւր Դ. Թագաւորութեանց
զբընում, Թ, 24. այսպէս.

1. Հմմտ. Սեբեոս: Վարազարտից Բագարա-
տունի (էջ 63)՝ Վարազ - Սահակ Բագարա-
տունի (էջ 117) (երկուսն էլ Եւ դարու) նոցա
որդերը կարող էին Վարազունան կոչուել (Եւսն
սահմանական վերջնաւորութեամբ), ինչպէս պատ-
մութեան մէջ չը յիշուած նոյնպէս Բագարա-

տունի՝ Բիւրատից (որը, զուցէ, նոյնպիսի
մականունն է, որպէս և Վարազ), կոչվում էր
Սմբատ Բիւրատեան, նոյն Եւ. դարում
(Հմմտ. նաև Աստղիկ (Հրատ. Պետ.) էջ 101 և
յաջորդ):

Ա Ն Ա Ն. (էջ 4).

ՓԱՆՈՍ. (Ե, 43. էջ 254).

... Եւ կանգնէ զկապարճան ի զետեայ ընդ ինքեան յաղեղն (ձեռագորտմ¹ յաւղն) սկսյաւ ընէ կամարին, և ընդ գիրկն մտեալ զաւրու թեամբ հարկանէ նետին զտախտակս երկաթիս և ընդ պղնձի վահանն ի թափ անցուցանէ ընդ նետնէն արձանն յերկիր խարսխեալ վտարեալ նետն. և վազվազակէ յերկիր կործանեալ զատուածակարծեալ հովայն. և զսարք նորա փախտական լինէին: Եւ նոքա զնետ մտեալ քափեցին ի նոցանէ երամակս ձիոց և ջրեաց և ուղտոց:

Վերջապէս հարկաւոր է մատնացոյց աւել փաւտտոսի յիշած (Ե, 44) մի հետաքրքիր դէպք² հայ Արշակունի Վաղարշակի (Փրկչ, Դ. զարու վերլում³) ամուսնոտրիւնը քաղաքատունի ասպետի գտտեր հետ (sic!),

Ա Ն Ա Ն. (էջ 9).

Եւ յուղարկէ զնա ի Մրծանայ ընդ արևմուտս զպարոս մեծաւ եռթանաւուն հազարաց սպառազինաց. և մեծամեծ իշխանաւք նախարարաց հազարաց բերսուրաց, որում ոչ ոք կարէր գրել ունել պատերազմաւ Սմա ընդ առաջ եղանկը քաղաքատն փառապետն որդուցն յորդուցն Արամանեակայ նախարար մեծ հանդերձ զաւրու: Մատուցանէ նմա պատարագ ոսկի և արծաթ. և զարգարէ զնա ի միջը և ի վակաս. պսակէ զնա ի թագ հայրենի. և նստուցանէ զնա ի վերայ ոսկիապատ ականակուռ գահոյիցն. և տայ նմա զղոտտոր իւր ի կնոքիւն: Զսա արար Արշակ արքայ ասպետն Հայաստան երկրին, որ էր իշխան և հրամանատար, ամենայն քաղաքաշէնքանն հրամանաց գլուխ, և հայր արքայի, և եղբայր, որում եւ զիշխանութիւնն տէրութեան այնորիկ:

գ) Եղիշէ (այժման խմբագրութիւնը¹. Է. դարից ոչ յետոյ). սորանից փոխ առած է թվում Արմանի բերդի անունը, որ հնագոյն հայկական մայրաքաղաք է դարձրած (Եղ. էջ 60, Աճ. 5). — բլուրն մտնէն «բնուրոշ դարձուածը Գողիաթի վերաբերմամբ

Իսկ նա (Արտաւազդ Մամիկոնեան) ընդ գիրկս մտեալ հարկանէր զայրն նետին. և կարանէ ի կարան թափ հանեալ զնետն, ցամաք ընկէնայր զնա: Եւ առեալ զնիզակն զնետ մտեալ փախտոյիցն, ընդ սուր հանեալ զգորսն Մեհրուստանայ... և ինքն մեծաւ անուամբ և բազում աւարաւ՝ զոր կապուտն թափէին ի զորաց թշնամեացն:

որը, ինչպէս ինչ թվում է, գիտմամբ է փոխադրել Անանունը (էջ 9) Քրիստոսից երկու դար առաջ: ՄԷԼ բերնը երկու յիշատակարանների նման հատուածները.

ՓԱՆՈՍ. (Ե, 44, էջ 255-256).

Ապա յետ այսր ամենայնի զոր արարեալ զորավարն սպարապետն Մանուէլ հանդերձ Արշակունի տիկնաւն և մանկամբն երկուքումբ². Արշակունի և Վաղարշակունի, հանդերձ ամենայն բանակաւն Հայոց մեծամեծ աւագայնոջն նախարարոցն երեւալ հասանէր ի զաւուռն Կարնայ. և ամենայն տանուտարք ընդ նմա: Եւ տայր սպարապետն Մանուէլ զղոտտոր իւր Վարդանդուխտ կին Արշակայ մանկանն Արշակունոյ և փեսայ իւր առնէ զնա: Առնէր հարսանիս և եղբոր նորին Վաղարշակայ և տայր նմա զղոտտոր ասպետին բազաւտունոյ ի Սպեր գաւառէ: որ Թաղաւորոյն (Եւ կարդում եւ՝ Թաղաւորին) քաղակապք լեալ էին ի բնմ և ազգին քաղաքաշէնքանն Արշակունայ...:

(Եղ. էջ 84), որ Անանունը (էջ 4) «մեղեան արձանի» է փոխել (ԲԷ). — մի քանի բառեր և դարձուածքներ, որոնք հնագոյն հայ մատենագիրների մօտ չեն պատահում, օրինակ՝ խարսխել, վերաբերորթիւն և այլն: Դ) Յովնան փոխադրւած² (Է. զարու ա.

1. Տես իմ նկատողութիւնը «Հանգես Ամ. սորան» թերթում, ապրիլ 1895 թ.:

2. Տես Յովն. Փոխիստիպայնի (որ և Օճնեցի)

զրուածքների լիակատար հրատարակութիւնը, Վենետիկ, 1833:

առջին կիսում¹⁾), սորանից է երեկ թէ վեր-
ցրած «Տիտանեան» ածականը, որ կարծեմ,
առաջին անգամն ենք պատահում սոյն մա-
տենագրի մօտ, և յետոյ մի քանի մանրա-
մասնութիւններ Քէլի մասին, թէ նա, օրի-
նակ, ըստ Անանունի²⁾ (էջ 23) «ի վեր կար-
ծէր զինքն թան զամենայն ազգս մարդկան՝
զիրն ոչ ճանաչելով զընթրիսն», — թէ
«Քէլե Տիտանեան... կանգնեաց զպատկերն
իւր և ետ երկրպագանել իբրև աստուծոյ»
— և ըստ Յովհաննու³⁾ (էջ 36, 37) «զիւ-
ցազունք անուանեալ զեր ի վերոյ մարդկայ-
նոյս համբաւաւային բնութիւն», — և «Քաղ-
ղէացունց տեսեալ ի Տիտանեանն զայն լիթ-
իարի... աստուածօրէն իմն պատուեցին...
ըստ իւրաքանչիւր լեզուաց այլաձևելով զնո-
րա անուն. Քուշացիք՝ Նիրովթ, Բաբիլա-
ցիք՝ Բէլ...»: — Աստուածաբանն բառը
նոյնպէս, կարծեմ առաջին անգամն է պա-
տահում Յովհանն փոխառաւ մօտ:

Բայց յիշեալ օժանդակ աղբիւրներէց զստ
ես մենք գտնում ենք Անանուն հատուածում
այնպիսի ցուցմունքներ, որոնք ծագումը
դժուար է բացատրել: Այլպիսի տեղեկու-
թիւնները կարող էին կամ առնուած լինել
Անանունի օրերով ժողովրդի մէջ տարածուած
զրոյցներէց, ինչպէս՝ օրինակ, կէս զրոց
ու կէս ժողովրդական առապելը Արայի
և Շաւիրամի մասին, որ՝ հաւանականօրէն,
հարաւային հայկական ծագումն ունի, և կամ
կազմուած է իրեն՝ Հեղինակի աշխատու-
թեամբ: Վերջին տեսակին ես վերագրում
եմ՝ ի միջի այլոց, և մեր Հեղինակի հաս-
տատութիւնը, որով Բագրատունեաց տոհմ
մապետ Բագարատը արեւակցութեան կա-
պերով կապվում է Անանունի ձեռքով մարմ-
նացրած նոյն իշխանութեան տոհմական
կողմնների հետ, իբրև իր հարազատ որդւոց
հետ, — այն է՝ Ասպատի (փոխանակ «Աս-
պետի») և Ջ.Դ.՝ — Է.Դ.՝ զարբերում բազմա-
տունեաց կրած մականունան՝ Բիրատի⁴⁾ հետ
(Անան. էջ. 6):

Յետ այնորիկ, և՛ առաջին Արշակունու
ժամանակ յիշուած Բագարատ փառազանքին
վերաբերեալ մանրամասնութիւնները՝ «Ար-
շակայ ընդ առաջ եղանէր Բագարատ փա-
ռազանն իսկապարս մեծ հանդերձ զաշուռս
(երբ առաջինը մուգը գործեց Հայաստանի
սահմանները), մատուցանէ նմա պատարագ
ոսկի և արծաթ, և տայ նմա զդռնստը իւր
ի կնոքիսն: զսա (զՖագարատը) արար (Ար-
շակ) ասպետ Հայաստան երկրին, որ էր
իշխան և հրամանատար, ամենայն քաղա-
ւորաբնան հրամանաց գլուխ. վերջապէս»
նա (Բագարատ) կոտորեաց զհսկայսն, որ
զաշարժողով եղէն ի վերայ նորաս Միշա-
գետս Աշտուղ...», — այս բոլորը իմ
կարծիքով կարելի էր վերագրել Անանունի
հարազդիտութեանը: Սակայն մեր հեղինա-
կը կարող էր ի նկատի ունենալ և իրեն
ժամանակակից անցքերը բազրատունի իշ-
խանների մէկի կեանքից, որոնք Ը.Դ.՝ — Թ.Դ.՝
զարբերում առաջնակարգ զեր էին խաղում
Հայաստանում, և փոխադրել այլ անցքերը՝
մի քանի փոփոխութիւններով, հետո ան-
ցեալը՝ Բագրատունեաց իշխանութեան բա-
ցառիկ զիրքը շեշտելու նպատակով, այն
զիրքը, որ իբր թէ խորին հնութեան էր
հասնում:

Վերջապէս մնում է առել Անանունի յի-
շած (էջ 9—10) Պարթեան և Հայոց թագա-
ւորների իրկու ցոցակի մասին, որոց ծա-
գումը նոյնպէս անյայտ է:

Պարսից Արշակունիների թիւը՝ հաշվելով
և իրեն՝ հարստութեան հիմնադիր Մեծն
Արշակին — այստեղ տասնեկերկու է, որոնք
միասին թագաւորում են 576 տարի:

Ոչ թագաւորների թուովը, ոչ նոցա ա-
նուններովը և ոչ էլ՝ վերջապէս, նոյն հարըս-
տութեան տեղութեամբ այդ ցուցակը նմա-
նութիւն ունի զպատական մատենագիրներից
և զըրաւմերից մեզ ծանօթ ցուցակին: Հա-
մաձայն ճիշտ տեղեկութիւններին՝ Պարթեանց
թագաւորների թիւը Անանունի բերած թուից
երեք անգամ աւելի է. Պարթեանց թագաւոր-
ների 12 անունների միայն առաջինն և եր-
կու վերջինները կարող են իսկական հա-
մարուել. իսկ հարստութեան տեղութիւն՝

1. Տես փոքր ինչ վեր, ծանօթ:

576 տարին, իսկականից հարիւր տարով աւելի է¹ :

Այսպիսի ակներև անհամաձայնութիւններն շնորհիւ, ամեն մի փորձ՝ հաշուեցնելու հակասութիւնները և մոցեցնելու այդ խառնափոխութեան մէջ որևէ բանաւոր հիմունքներ, կարող է վերջանալ, իմ կարծիքով, միայն անաջողութեամբ :

Գլխիմ համար մէկ բան անտարակոյս է. Անանուն հեղինակը իրեն նպատակ դրած լինելով ներկայացնել իր ընթերցողներին Պարթևացի և Հայոց Թագաւորների ցոցակը, շուէնը այդ վերջինը առձեռն պատրաստ իրեն ծանօթ հեղինակաւոր գրութեանը մէջ՝ գրեց թուում և Սերիոսի ժամանակագրութեան մէջ, որ հաղորդում է, ի միջի այլոց, Մարաց և Պարսից Թագաւորների լիակատար ցուցակները, — նա չը գտաւ ընդհանրապէս Արշակունիների համար ոչինչ տեղեկութիւններ, բաց ի երեք թիվն, անցողակի կերպով արած նկատողութիւնից. Ուստի նա ստիպուած էր խնդր յօրինել ցուցակներ նոյն եղանակով, որով արդէն գտնուած էին Հայոց տնիսնագոյն նահապետների անունները։ Եւ ի հարկէ շատ էլ վտանգաւոր չէր հրապարակ հանել այսպիսի մի հնարուածք, որը՝ նոյն խնդրին վերաբերեալ ստոյգ տեղեկութիւնների բացակայութեան պատճառով՝ անգամ և համայնադէտ Եւսեբիոսի մօտ, — անհնարին էր ճշգրտել կամ վերաստուգել :

1. S. v. Gutschmid, Geschichte Irans etc. — Իսկ ինչ վերաբերում է 576 թուին՝ այդ թիւը կարող էր ստացուել իմ կարծիքով, նորանից, որ Անանունը հիշաւ իմանալով Պարթևացի Թագաւորութեան անկման ժամանակը, որոշել է նոյն անցքը մօտ աւելցնելու ձեռքի տակ գտնուած աղբիւրների հիմամբ։ Ցայտնի է, որ Եւսեբիոսի Քրոնիկոնը, որ ցոյց է տալիս Պարթևների երևման թիւը (Անտիոքոս Թէոսի 11-դ տարին և Արտաշատի 1766 թ.) և աւարտւում էր Մեծն Կոստանդինոսի 20-դ տարով և Արտաշ. 2343 թ. — չէ յիշում հարստութեան անկման ժամանակը։ Այն ինչ Անանունին յայտնի էր Ագաթանգեղոսից, որ Մ. Կոստանդինոս

Յատկապէս Պարսից Արշակունիներին համար Անանունը իր տրամադրութեան ներքոյ ունէր ընդհանրապէս Պարսից քաղաքներն անունները և միայն մի քանիսը Պարթևացի. թէ մէկը և թէ միւսը նա քաղել է Ս. Գրքից, Եւսեբիոսից և գուցէ, այլ երկու հայ մատենագիրներից։ Այսպիսի անունները սակաւ չէին. դոցանից Արշակը (Ա. Գիրք Մակար. ԺԻ. 2-3, ԺԵ. 22. Եւս. Քրոն. Ա. էջ 166-167, Բ. էջ 130-138), համաձայն Եւսեբիոսին՝ անունաւորուած է հիմնադրել Հարպուսթեան։ Միևնոյն անունը կրկնուած է ցուցակում ևս երկու անգամ։ Եւ այսպէս՝ 12 թագաւորներից երեքի տնունը արդէն գտնուած էր։ Մնացեալ իննը կազմուած են այսպէս. Արտաշէս, Դարեհ, Արշաւիւր, Արշէն (կարգով Արշէն՝ գուցէ, արտաս) և Վողոգէս՝ Ս. Գրքից (Գիրք Եգրի, Եսթերայ, Ա. Մակար., Դարեհի և այլն) և Եւսեբ. Ժամանակագրոգրիէից (Ա. էջ 50, 89... Բ. էջ 114-122, 160). Վաղարշ, Արտաւան և Արտաշէր՝ Ագաթանգեղոսից (էջ 29, 31, 32). Պերոզ՝ Սերիոսից՝ (էջ 23-25). «Աշխաշ» անունն ծագումը, եթէ միայն սա աղաւաղուած չէ, դժուարանում եմ բացատրել² :

Սակայն յիշեալ անձնաւորութիւններից իսկական Պարթևացի Թագաւորներ չեն։ Արշակ (Ա. և Բ.), Վաղարշ և Արտաւան։

Պարսից Արշակունեաց ցուցակի օրինակով կազմուեց և Հայոց Արշակունեացը (Անան.

Ժամանակակից էր Տրդատին, որդուն Խոռոզմի օրին սպանեց Պարթևացի զահր տապալող Արտաշէր Սասանեանը։ Ետո հետամուտ լը ինկելով ճշտութեան, Անանունը հանել է 2342-ից (Կոստանդինոսի 19-դ տարին և մօտաւորապէս առաջին Սասանեան Արտաշէր ժամանակը) 1766՝ (այն է՝ Պարթևների երևման և Արշակ Ա-ի Թագաւորանալու տարին), — և ստացուել է 576 :

2. Iusti իրանագէտը իր Iranisches Namenbuch հետազոտութեան մէջ (էջ 4) Aēnas անունը համամատու է նոր Պարսկերէնի ānās բառի հետ, որ նշանակում է kennend զիտոյդ, ճանաչող :

էջ 10) և Հարստութեան Հիմնադիր Արշակի մասին գիտար չէր գուշակել նոյն իսկ հարստութեան անունից և Եւսեբիոսի վկայութեանց (Բ, էջ 130) մինչև անգամ Պրուկոպիոսի ուղղակի ցուցմունքից զատ (De Aedif. III, 1), որ Անանունին կարող էր և անծանօթ լինել: Մնացած 22 Արշակունեաց անունները մինչև Պապ (այսինքն մինչև Դ. Բ. Գաբու վերջին քառորդը Քրիստոսից յետոյ), մեր հեղինակը հաւաքել ու յարմարեցրել է իր նպատակին, կրկնելով նուցանից մի քանիսը երկու անգամ և մոցնելով նոյն ցուցակի մէջ նաև իր Պարթև թագաւորներից երկու — երեքին: Այսպէս Վաղարշ, Խոսրով Ա. և Տրդատ, նոյնպէս Արտաւան, և Արտաշէր՝ առնուած են Ագաթանգեղոսից Տիգրան, Սանատրուկ, Խոսրով Բ., Տերան, Արշակ, Պապ, Վաղարշակ, Արշակ Բ. և նոյն իսկ Սասանեան Շապուհ՝ փառաստուից: Արշամ և Արգաթ՝ Լարոսթայից Արտաշէս՝ Կորիանից: Արտաւազդ՝ Եղնիկից և կամ Ժողովրդական աւանդութիւններից (եթէ թող տանք, թէ Անանունը ծանօթ չէր Յովսէպոսին, Հր. Հն. ԺԵ. դ. 3, Պատ. Հր. Ա. ԺԹ, 5): Արշաւիր՝ Եւսեբիոսի ժամանակագրութեանից: Վերջապէս, Երուանդը կազմուած է Երուանդաշատ քաղաքի անունից (փառաստ) և կամ գուցէ յետ ժամանակի ժողովրդական աւանդութիւններից:

Թրգմ. ԼԻՊԱՆԻՅ ՆԱՍՐԵԱՆՆԻ

Շարայարեղի

— — — — —

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ. —

Կը հրատարակէ Հայ աշխարհագրական, ազգային, բանասիրական և գիտական պատկերազարդ յօդուածներ: Խմբ. Ե. ԼԱՍՏԵԱՆՏ: — Գինը է 5 ֆռ.:

Հայտէ՛ SCHOUSCHA (Russie) Caucase. E. Lalayantz.

ԱՆԱՋԻՏ. — Հանդէս ամենայ, ազգային, գրական, վիպասանական: Խմբագր. Ա. Զօպանեան: — Գինն է 12 ֆռ.:

Հայտէ՛ «A. Tchobanian. 6. Place de l'Odéon, PARIS.

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԻՅ

ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱՇԽԱՐՀԱԿԱՆ

ՅՈՒՑԱՀԱՆԴԵՍ Ի ՎԵՆԵՏԻԱ

Vixit S. Marco!

ԱՅՐ սերոյմ տօմ է այսօր՝ յորում կը գրեմք, և միմեզնի ճառագայթարծակ արեգակն կը փայլի լուսափիւռ ջրոց վրայ և լուսաւոր համդէս մը աւելն կողմը կը հնչէ, փառահեղ արծազանգով մը ղեմնետիկ ամհամեմատ արուեստական մեծութեամբ վրայ կ'աւելնայ երրորդ համազգային ճուգահեմ. դէսը, որոյ բացման համդէսն կատարուեցաւ Ապրիլ 24ին:

*

Բացման համդիսին պարզութիւնն զայն ամենուն համակրելի ըրաւ: Առաւօտեան ժամը 10ին — հիւսնուի գարնամային առաւօտ մ'էր — բացման համդիսահիւրք և համդիսականք ղեմնետեան յատուկ պիւտոմներով, գեղազարդ կոմտոմներով միկնեցան թագաւորական պարտիզէն ըմկիւրելով ճեմովայի դրսի՝ որ իտալիոյ թագաւորին մերկայացուցել էր: Եւ մարտամուտը ու բացմանք ողջոյմներուն, շքեղ դրօշից զուարթ ծածամման մէջ պարզուեցաւ եզական, գեղեցիկ, համախրելի սիւնազարմայ մեծաշուք տեսարանը՝ համդիսին տեղուն ըմդարձակութեամբ մէջ: Այսպէս ըստ արժամույն գեղարուեստական յուզմամբ մը սկսաւ համդէսն, և երբոր համդիսաւոր խումբն հասաւ ի ճառարակաց պարտէզը՝ զոր գարնամային մորըմծիւղ ծաղիկներն զարդարել էին, զայն աւելի զուարթացուցիւր էր ուրախ, ոգեւորեալ և ամթիւ բազմութիւն ժողովրդեան, այնպէս որ կարծես թէ ճուգահեմը արդէն իսկ բացուել էր: ղեմնետիկ քաղաքն կարծես կ'իմամայ՝ թէ սեղոտ միութիւն մը կայ իւր մոգել հմութեան և դիւթիւ մորութեամբ մէջ՝ զոր այլ զամագգային ճուգահեմը կու տամ իրեն, այնպէս որ Ս. Մարկոսի ծովածոցին հրաշարուեստ տեսարանը՝ յորում արուեստն և ըմութիւնը միանգամայն մուտան են իրարու հետ, և չորս ու երկնք հոյակապ յիշատակարանաց և պալատաց շրջանակ մը կը կազմեն, — արդ այս տեսարանը՝ առաջին հրաշալիքոտ պատկեր երեցաւ ճուգահեմ. դիսին՝ որում բացման ամօկլածօք կը սպասէր ժողովրդը: Մեծ էր ամհամբերութիւնը, սակայն չտնեց երկայն: